վասն անիրաւ պահանջմանց Ցունաց, և թէ վասն հակառակութեան Լատինաց, և համաձայն մտաց նոցին՝ գրեաց և ինքն Ստեփաննոս Պատրիարք 'ի Դուռն, և աշխատութեամբ Գլխաւորաց ազգին՝ Վէզիրն մեծ՝ 'ի շնորհս արտաքին գործոց պաշտօնէին՝ գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի՝ չկործանել զչինուածս Հայոց՝ մինչեւ ելցէ հրովարտակ, թէեւ Լատինք ասէ՝ առին հրովարտակ սակս ուխտին իւրեանց յԵրուսաղէմ եւ 'ի լեառն Զիթենեաց, սակայն զանազան մեկնութիւնս տուեալ այնմ, կամեցեալ են քակել զսեփհական տեղիս Հայոց՝ և ինքեանք չինել, եւ վասն այսր առեալ են պայմանաժամս ամիսս երիս 'ի Փոխարքայէն Եգիպտոսի. եթէ ոչ ժամանեսցէ 'ի միջոցիս յայսմիկ հրովարտակ Յարքայէ՝ փոյթ կալցեն կատարել զկամս ցանկութեան իւրեանց։ Իսկ Պատրիարքն Հայոց՝ ասա 'ի մայրաքաղաքիս Թախանձանօք խնդրեաց նոր հրովարտակ 'ի հաստատութիւն առաջնոցն, և 'ի խափանումն ընդ միւս հակառակութեան Լատինաց, որպէս յայտ առնէ Իլանն ձեր։ Ցարձանագիրս կայսերական Դիւանին թէպէտ և գտանի տուեալ հրովարտակ Լատինաց, այլ ոչ նշմարի 'ի նմա կէտ ինչ սակս շինութեան տեղւոյն այնորիկ, այլ անարգել կատարել զուխտս. և յակնարկելն մեր յաղերսագիրն, ակներեւ տեսանի թէ խնդիրն առիթ է մեծի զրկանաց Հայոց։ Ուստի հարկ եղեւ համեմատել ընդ արձանագրութիւնս և զպարտս ու պատշաճն գործադրել, և զօրինակ Կայսերական հաւանութեան առ մեծութիւն ձեր բացայայտ դրել։ Ի հասանիլ դրոյս առ ձեզ՝ փութասջիք խոհեմութեամբ զկարեւորն գործադրել, 'ի ١٩ Շէվվալ ամսոյ՝ ١٢٥٢։

Ի հասանիլ այսր նամակի մեծի Վէզիրին յԵրուսաղէմ՝ Լատինք լուեցին առ վայր մի, այլ ոչ կացին յետս խորհելոյ և նիւթելոյ զչարիս։ Իսկ Ցոյնք որ մինչեւ ցայս վայր յայտնի և ծածուկ հակառակէին Հայոց, և մեծամեծ ջանիւք վաստակէին 'ի դրունս մեծամեծաց, և երբեմն խըրոխտանօք արհամարհէին զՀայս, թէ տամք եղծանել զհրովարտակս ձեր, եւ կործանեմք զչինուածսն, յետ կարգաւորելոյ զամենայն ինչ՝ բոլոր բարձին 'ի Դուռն Պատրիարքունք և ժողով Մետրաբոլտաց նոցին՝ և ետուն